<<ՆՈՐ ԺԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ>> ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման `<<Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում՝ «Ես և շրջակա աշխարհը>>առարկայի միջոցով:

Առարկան՝ Ես և շրջակա աշխարհը

Հետազոտող ուսուցիչ՝ Սեդա Մուրադյան

Ուսումնական հաստատություն՝ Ալավերդու Կարապետ Դոլինյանի անվան N 11 միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------3
2. Բնագիտության ուսուցումը և բնապահպանական վերաբերմունքի ձևավորումը <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի միջոցով----------4
3. Բնապահպանական կրթության մանկավարժական հիմունքները-------6
4. Բնության,աշխարհի նկատմամբ անձնավորության ձևավոումը----------7
5. Բնապահպանական կրթության արտադասարանային ձևերը----------11
6. Բնապահպանական կրթության արտադպրոցական ձևերը----------14
7. Միջազգային էկոլոգիական օրացույց----------16
8. Եզրակացություն ----------17
9. Գրականության ցանկ----------18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկության ի հայտ գալով,սկսվում է նյութի զարգացման որակական նոր աստիճան, որտեղ մարդկային հասարակությունը դուրս է գալիս կենդանի բնության սահմաններից։21-րդ դարը մարդկության գոյատևման և կայուն զարգացման ուղիների ընտրության ժամանակաշրջան է։ Այս ժամանակաշրջանում գլխավոր խնդիրներից է այն, որ մարդն ապրում է էկոլոգիապես աղտոտված միջավայրում։ Միջավայրի աղտոտվածությունը ազդում է նաև ամբողջ էկոհամակարգի վրա։

Դրա հետ կապված կարևոր նշանակություն է ձեռք բերել էկոլոգիական իրավիճակի փոփոխությունների կանխարգելումն ապագայում և դրա հիման վրա մոտակա տարիների համար որոշակի հեռանկարային միջոցառումների մշակումը, որոնք ուղղված են շրջակա միջավայրի պահապանմանը , վիճակի բարելավմանը , կենսոլորտի անցանկալի փոփոխությունների կանխարգելմանը։ Բնության նկատմամբ կիրառվող միջոցների գործնականությունը որոշվում է մարդկանց վարքով և բնության նկատմամբ ունեցած վերաբերմունքով։ Դա է պատճառը, որ բնապահպանական ճգնաժամը մեծ մասամբ աշխարհայացքային, գաղափարախոսական ճգնաժամ է։

Այս պատճառով կարևորվում է էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը սկսել հենց հանրակրթական դպրոցից։ Բնության նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը սկսվում է կրտսեր դպրոցական տարիքից։ Բնության նկատմամբ սերը և խնամքը ձևավորվում և ուսուցանվում է դասավանդվող բոլոր առարկաների միջոցով։ Սակայն վերջին տարիներին դասավանդվում է <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան, , որը հստակ անդրադառնում է այդ հարցին։ Այս առարկայի միջոցով ձևավորվում է անձը՝ որպես հասարակության անդամ, ինչպես նաև բնության մասնիկ։ <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան շատ կարևոր դեր է խաղում բնապահպանական խնդիրների լուծման ուղիների, անձի վերաբերմունքի, աշխարհաճանաչողական , խնայողաբար բնօգտագործման հարցերում։

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ <<ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ>>ԱՌԱՐԿԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

<<Մենք պետք է նորից և նորից ինքներս մեզ տանք վաղուց ի վեր հնչող հարցը՝ ովքե՞ր ենք մենք, բնության զավակնե՞ր, թե՞ նրա տիրակալներ, ինչի՞ համար ենք այս աշխարհ եկել՝ օգտագործելու՞, թե՞ ստեղծելու...>>Գ.Ա.Ցագոդին

Էկոլոգիական դաստիարակության հայեցակարգի համաձայն՝ էկոլոգիական դաստիարակությունը ուսուցման, դաստիարակության, մտածողական, հուզազգացմունքային ամբողջական գործընթաց է: Այդ որակները ձևավորվում են բնաճանաչողական և բնապահապանական տեսական և գործնական գիտելիքների, կարողությունների, արժեքային կողմնորոշումների, շրջակա միջավայրում վարքի և գործունեության հասարակականորեն և բնապահպանության միջոցով:

<<Էկոլոգիական դաստիարակություն>> հասկացության էությունը բնութագրվում է որպես աճող սերնդի ուսուցման անընդհատ գործընթաց՝ ուղղված ընդհանուր էկոլոգիական մշակույթի և էկոլոգիական պատասխանատվության ձևավորմանը՝ իրեն հարազատ մարդկանց, իր երկրի, մոլորակի ճակատագրի նկատմամբ:

Մանկավարժներն առանձնացնում են էկոլոգիական դաստիարակության հետևյալ խնդիրները՝

. շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի մշակում
. քաղաքացու դաստիարակում
. հասարակության մեջ ընդունելի փոխհարաբերությունների հաստատում:

Կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության նպատակի և խնդիրների շուրջ տարբեր բանաձևեր են առաջարկվում՝ որոնք կիրառվում են ուսուցանվող բոլոր առարկաների միջոցով, հատկապես <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի միջոցով:

Առաջարկվող բանաձևերից են.

1. Բնապահպանական մշակույթի ձևավորում, երեխայի վարքում բնության հետ գիտակցված հարաբերությունների որոշակի մակարդակի ձևավորում:

2. Բնության , մարդկանց, իր կյանքում իր դերի նկատմամբ գիտակցված վերաբերմունքի մշակում:

3. Բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորում:

4. Երեխաների մեջ բնության պահպանման, զարգացման անհրաժեշտության գիտակցման դաստիարակում:

5. Երեխայի մեջ իր գոյության կենսամիջավայրի նկատմամբ վստահության զարգացում:

6. Կենդանի և անկենդան բնության տարբերությունների վերաբերյա լգիտելիքների ձևավորում:

7. Վայրի բնության հետ մարդու խելամիտ փոխհարաբերության և մարդու ստեղծարար աշխատանքի , մտավոր ստեղծագործության կարողությունների ձևավորում:

Էկոլոգիական դաստիարակության մանկավարժական խնդիրները վերաբերում են.

ա-ուսուցմանը՝ մարդկության և հասարակության միջև փոխադարձ կապի իմացության տիրապետում, բնապահպանական խնդիրների լուծման գործնական ունակությունների ձևավորում

բ-դաստիարակությանը՝ արժեքային կողմնորոշում շրջակա միջավայրի պահպանման ակտիվ գործունեության սովորույթի մշակում

գ-զարգացմանը՝ բնապահպանական իրավիճակների վերլուծության ընդունակություն:

<<Բնությունը համաչափություն և կանոնադրություն է սիրում, ոչ մի բան մարդկային հնարմանց մեջ այդ հրաշալի ներդաշնակությանը այնքան համանմանելու պահանջ չունի , ինչքան մարդուս կրթության արվեստը>>:

Ղ. Աղայան

Կրտսեր դպրոցական տարիքում <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի միջոցով առաջ են քաշվում հետևյալ խնդիրները՝

-բնաճանաչողական ընդունակությունների , իմացական հետաքրքրությունների ձևավորումը,

-բնության երևույթների, բուսական ու կենդանական աշխարհի փոխկապվածության վերաբերյալ գիտելիքների ձևավորումը,

-բնության մեջ ճիշտ վարքագծի ձևավորումը,

-կենդանի բնության նկատմամբ ապրումակցման ձևավորումը,

-միմյանց նկատմամբ հանդուրժողականության , հարգանքի ձևավորումը:

Էկոլոգիական կրթության բովանդակությունը նպաստում է երեխայի մեջ մարդու՝ որպես բնության մի մասնիկ իր պատկերացման և երկրագնդի վրա կյանքի ձևերի նկատմամբ հարգալից և հոգատար վերաբերմունքի ձևավորմանը: Նպաստում է նաև երեխայի կողմից բնության գեղագիտական ընկալմանը, արտաքին աշխարհի հետ ներդաշնակ ապրելու ցանկությանը:

Բնապահպանական կրթության մանկավարժական հիմունքները

Ռալֆ Էմերսոնը գրել է. <<Փիլիսոփայության տեսանկյունից տիեզերքը կազմվածէ <<հոգու>> բնությունից>>:

Իսկ ինչպե՞ս են փոխազդում միմյանց հետ բնությունը և հոգին: Բնության հետ փոխազդեցությունը ունի մեծ հոգեբանամանկավարժական ներուժ: Այն իրականացնում է.

1. Հոգեբանաֆիզիոլոգիական ֆունկցիա-կենդանիների և բույսերի հետ փոխազդեցությունը հանում է սթրեսը, նորմալացնում է նյարդային համակարգի աշխատանքը: Օրինակ՝ ակվարիումային ձկներով կարճաժամկետ հիանալը արդյունավետ միջոց է նյարդային համակարգը հանգստացնելու, անքնության դեմ պայքարելու համար:

2. Հոգեթերապևտիկ ֆունկցիա- կենդանիների հետ մարդկանց փոխազդեցությունը նպաստում է միջանձնային հարաբերությունների ներդաշնակությանը: Կենդանիների խնամքը նպաստում է հոգեկան դեպրեսիայի վերացմանը:

3. Վերականգնողական ֆունկցիա - կենդանիները և բույսերը շրջապատող միջավայրի հետ մարդու մարդու փոխազդեցության ուղիներ են , որոնք նպաստում են հոգեբանական և սոցիալական վերականգնմանը: Օրինակ՝ բնության հետ փոխազդեցությունը մեծ դեր ունի դպրոց - ինտերնատներում, որտեղ երեխաները զրկված են ծնողներից: Կամ հոգեկան շեղումներ ունեցող երեխաների 2/3-ին կենդանիները տալիս են այն, ինչ չեն տալիս մարդիկ:

4. Էսթետիկական ֆունկցիա –բնության հետ մարդու փոխազդեցությունը նպաստում է անձի էսթետիկական զարգացմանը: Օրինակ՝ Արևելքի և Ամերիկայի մշակույթների ինտենսիվ հաղորդակցումը եվրոպացիներին ստիպեցին իրենց մոտ հիմնել բուսաբանական այգիներ, ազգային պարկեր, արգելավայրեր:

5. Ճանաչողական ֆունկցիա- բնության հետ փոխազդեցությունը կարող է բավարարել անձի ճանաչողական պահանջմունքները, նպաստել նրա մտավոր զարգացմանը: Օրինակ՝ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները բնության հետ փոխազդեցության օգնությամբ լուծել են իրենց առջև ծառացած խնդիրները: Բույսերի կամ կենդանիների խնամքը տարել է նրանց համապատասխան ինֆորմացիայի որոնումների, առաջացել է հետաքրքրություն:

6. Իրազեկության պահանջմունքների բավարարման ֆունկցիա - իրազեկության պահանջմունքը՝ <<Ես կարող եմ>>, մարդու կարևորագույն առանձնահատկություններից է: Բնության հետ փոխազդեցությունը կարող է լինել այդ պահանջմունքի լրացուցիչ ուղին, թույլ է տալիս բարձրացնել ինքնագնահատականը:

7. Ինքնադրսևորման ֆունկցիա-մարդու կարևորագույն պահանջմունքներից մեկը

սեփական ներուժի իրականացումն է: Ինքնադրսևորման անհնարինությունը բերում է
խորագույն անձնական ճգնաժամի: Օրինակ՝ եթե երեխան զբաղվում է օրգանիզմների համակարգի ստեղծումով՝ ծաղկանոց, ակվարիում, նա ստեղծում է <<իր սեփական աշխարհը>>: Նա փորձում է ինքնահաստատվել իր ստեղծած <<աշխարհում>>:

8.Հաղորդակցման ֆունկցիա- բույսերը և կենդանիները մարդու հետ կարող են իրականացնել հաղորդակցման զուգընկերոջ ֆունկցիա: Երեխաների մեծ մասը կիսվում է տնային կենդանիների կամ բույսերի հետ , պատմում դպրոցում կատարվածը:

Այսպիսով բնության հետ փոխազդեցությունը ունի մեծ հոգեբանամանկավարժական ներգործություն:

Բնության, աշխարհի նկատմամբ անձնավորության հարաբերության ձևավորումը

Բնության, աշխարհի նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքի առանձնահատկությունը կարող է արտացոլվել բովանդակային նկարագրման ուղիներով՝ գիտակցված վերաբերմունքի լայնության, ինտենսիվության աստիճան:

Բնության նկատմամբ վերաբերմունքի լայնությունը-Վերաբերմունքի ընդարձակության ձևավորումը պայմանավորում է մանկավարժական պրոցես իկազմակերպման այնպիսի անհրաժեշտություն , որպեսզի բնության նկատմամբ վերաբերմունքի սուբյեկտիվ տարածքի մեջ ընդգրկվեն որքան հնարավոր է շատ բնական օբյեկտներ:

Բնության նկատմամբ վերաբերմունքի ինտենսիվությունը-Մանկավարժական պրոցեսը պետք է նպատակաուղղվի և ընդարձակի բնության նկատմամբ երեխայի վերաբերմունքի դրսևորման հնարավորությունները զգացմունքի և ճանաչողական ոլորտում, պրակտիկ գործունեության ու վերաբերմունքի մեջ:

Վերաբերմունքի գիտակցության աստիճան-Մանկավարժական տեսակետից բնության նկատմամբ անձի վերաբերմունքի գիտակցությունը պետք է ձևավորել վաղ տարիքից: Կրտսեր դպրոցական տարիքում խորհուրդ է տրվում երեխաներին հարցեր տալ բնության նկատմամբ նրանց վերաբերմունքի մասին, առաջարկել նկարագրել, բնութագրել այն: Այդպիսի առաջադրանքները դժվար են, սակայն արդյունքում կարելի է հասնել գիտակցության մակարդակի բարձրացմանը:

Այդ հարցում օգնում է նաև <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան իր բնությանը վերաբերող թեմաներով:

Մանկավարժական պրոցեսի անընդհատության միջոցով կարելի է հասնել բնության նկատմամբ վերաբերմունքի կայունության: Բնության և հասարակության

փոխազդեցության հարցերի լուծումն անհնար է առանց բնապահպանական հիմնախնդիրները հասկանալու և էկոլոգիական մտածողության ձևավորման՝ աճող սերնդի մոտ :Այս պրոցեսում շատ կարևոր դեր է խաղում հանրակրթական դպրոցը:

Բնագիտության՝ աշխարհի , տիեզերքի, օվկիանոսների մասին կրթությունը հանրակրթական դպրոցներում դաստիարակում է երիտասարդ մարդու կուլտուրայի հիմունքները, պատրաստում է նրան կյանքին, մոլորակի երևույթներին և հասարակության մեջ կողմնորոշվելուն: Բնագիտական, բնապահպանական կուլտուրան իր մեջ ներառում է գիտելիքներ՝ բնությունը կյանքի և գեղեցկության աղբյուր է , որի պահպանման համար պետք է պատասխանատվություն կրել: Այսպիսով էկոլոգիական կուլտուրա – դա մարդու վարքագծի կուլտուրան է, որի շնորհիվ մարդկությունը շրջակա միջավայրը պահպանում է նյութերի և էներգետիկ աղտոտումից:

Բնագիտական կրթության համակարգում կարևոր տեղ է տրվում տարրական դպրոցում: Այս ընթացքում գիտելիքներն ու բնության հանդեպ սերը ուսուցանվում է դասավանդվող բոլոր առարկաների միջոցով: Սակայն հատուկ դեր է խաղում <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան, որի միջոցով երեխան կատարում է բնապահպանական իր առաջին քայլերը: Նա ճանաչում է մոլորակն ու աստղերը, բույսերի և կենդանիների կյանքը, զարգանում են բնական երևույթների մասին գիտելիքները: Այս տարիքում երեխաները ճանաչում են նաև մարդու կառուցվածքը, օրգանները, զարգանում է նաև առողջության մասին գիտելիքները:
Հասկանում են նաև, որ մարդը բնության մասնիկ է , և առանց նրա չի կարող գոյություն ունենալ: Բնությունը նաև նյութական բարիքների աղբյուր է: Օրինակ՝ <<Ինչու՞ են ծաղիկներ աճեցնում>>, կամ <<Ինչու՞են հողագործությամբ կամ այգեգործությամբ զբաղվում>>, կամ էլ <<Ինչու՞ են տանը թութակ, շուն պահում>>:
Հատուկ նշանակություն են բույսերի ու կենդանիների մասին թեմաները, որոնք ուսուցանում են բնության մեջ սերտ կապերը: Կարևոր է բույսերի ու կենդանիների բնապահպանական դերը՝ օրինակ գայլերը անտառի սանիտարներն են: Երեխաները ստանում են նաև աշխարհագրական կրթություն, ճանաչում են լանդշաֆտը, հին քաղաքակրթությունները: Ծանոթանում են կլիմային, անկենդան և կենդանի բնությանը: Զարգանում է նաև արդյունավետ և խնայողաբար բնօգտագործումը:

Էկոլոգիական գիտակցության ձևավորումը դպրոցի կարևոր խնդիրներից է, որը ձևավորում է բարոյական մշակույթը և անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա: Այն խթան է հանդիսանում էկոլոգիական գիտակցության զարգացման համար:

Բնապահպանական կրթության հիմնական նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ , որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է: Դաստիարակվում է էկոլոգիապես գրագետ և ազնվաբարո անձ:

Բնապահպանական կրթության ժամանակ առաջ են քաշվում հետևյալ խնդիրները.

ա-գտնել բնապահպանական խնդիրներ և առաջադրել արդի լուծման ճանապարհներ
բ-ձևավորել էկոլոգիապես գրագետ և առողջ ապրելակերպով անհատ
գ-մտավոր և գործնական հմտությունների զարգացում, միջավայրի գնահատում և բարելավում, ակտիվ աշխատանքի ձգտում
դ-խելացի՝ կարողանալ վերլուծել բնապահպանական իրավիճակներ**, հուզական՝** վերաբերմունքը բնության հանդեպ**, բարոյական՝** կամքը, պատասխանատվությունը:
Ուսուցման գործընթացում խթան է հանդիսանում կազմակերպման յուրաքանչյուր ձև սովորողների հետ, զարգացնում տարբեր տեսակի ճանաչողական գործունեություններ:

Բնապահպանական հայեցակարգի ձևավորումը դպրոցներում, սովորողների մոտ <<Մարդը և աշխարհը>> գաղափարախոսության մեջ տալիս է ուժեղացված էկոլոգիական հասկացություններ: Սկսած <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի առաջին դասից՝ կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որը դառնում է անբաժանելի ամբողջականություն, իսկ սովորողը՝ ամբողջության մի մասնիկը: Սա հնարավորություն է տալիս վաղ հասակից դաստիարակել բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ՝ դրական և բացասական: Երեխաները ստանում են հստակ գիտելիքներ բույսերի և կենդանիների մասին:Սովորողի համար բացահայտվում են հակասությունները հասարակության և բնության միջև: <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի միջոցով խորությամբ զարգանում է կապը կենսաբանության, աշխարհագրության, ֆիզիկա, քիմիա առարկաների միջև, գաղափար են կազմում էկոլոգիական աղետների մասին:

Պատմության ընթացքում հասարակություն – բնություն ներդաշնակ փոխազդեցությունը հիմնավորելու համար ուսուցիչը ներկայացնում է գիտական պատճառներ բնությունը պաշտպանելու աշխարհի մակարդակով՝ սկսած սեփական երկրից:Անհրաժեշտ է նաև ուսուցանել ամենահարմար մեթոդները՝ վերլուծելու և կարևորելու բնապահպանական արժեքները , շահերն ու կարիքները, տարբեր կարծիքների միջև համեմատություն անցկացնելով՝ կառուցել սեփական վերաբերմունք խնդիրների նկատմամբ:Կարելի է կազմակերպել բնապահպանական ուղղվածություն ունեցող ոչ ավանդական դասաժամեր: Օրինակ՝ տոն- միջոցառում <<Անտառի տոն>>, կամ խաղ- մրցույթ, արշավներ: Այսպիսի դասերը ձևավորում են ակտիվ քաղաքացիական դիրքորոշում հայրենի բնության նկատմամբ:Երեխաները սովորում են նաև խնամել տնային բույսեր, կատարում են ծառատունկ, տարբեր տեսակի ծաղիկների աճեցում:Բնապահպանական խնդիրներ լուծելիս երեխաները ձեռք են բերում նոր գաղափարներ, գտնում են նոր բացահայտումներ, զարգանում է բանավիճելու կարողությունը, ձևավորվում է անհատական հարաբերությունները:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկան առանձնահատուկ տեղ է գրավում դասավանդվող մյուս առարկաների նկատմամբ:Այն լայն հնարավորություն է տալիս բնապահպանական գիտելիքներ մատուցելու , անհատի՝ հասարակության մեջ ընդգրկվելու առումով: Բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի

ձևավորումը պետք է սկսել վաղ տարիքից։ <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան տալիս է այդ հնարավորությունը։ Առարկայի դասավանդման միջոցով զարգանում է աշխարհաճանաչողությունը։ Առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել ուշադիր լինելու, հետազոտելու, խնամելու, պահպանելու, բարեկարգելու կարողությունները։ Աշակերտները տարբեր գործնական աշխատանքների շնորհիվ ճանաչում և սիրում են բնությունը։ Եթե նախկինում շրջակա միջավայրի պահապանությունը դիտվում էր որպես բնապահպանական խնդիր, ապա այսօր այն վերածվել է հիմնախնդրի։ Հասարակությունը հեռացել է բնությունից, ոչնչանում են անտառներ՝ կառուցելով գործարաններ, քաղաքներ, աղտոտվում է շրջակա միջավայրը, որի պատճառը մարդկային անտարբերությունն է, անբարեկիրթ վերաբերմունքը։ Անտառների հատումը բերում է մի շարք աղետներ, այդ թվում նաև ջրի պաշարների պակասում։ Այս հարցերի շուրջ քննարկումների իրականացման համար մեծ է դպրոցի և ուսուցչի դերը, և այս խնդիրներին անդրադառնում են <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի միջոցով։ Երեխաները սովորում են նաև խնայողաբար վերաբերվել բնության բարիքներին ու բնական պաշարներին։ Դասերի արդյունավետությունը աճում է նաև ՏՀՏ-ի օգտագործման շնորհիվ։ Այդ ընթացքում երեխաները ճանաչում են ոչ միայն հայրենի բնությունը, այլ նաև աշխարհում կատարվող բնապահպանական աղետները։ Առարկան մեծ հետաքրքրություն է առաջացնում։ Կատարվող փորձերն ու դիտարկումներն ակտիվորեն ներգրավում են երեխաներին։Երեխաները դպրոցից սովորում են, որ մոլորակի ռեսուրսները սահմանափակ են, շրջակա միջավայրը խոցելի է դառնում։ Երեխաները պետք է գիտակցեն իրենց դերը բնապահպանության հարցում, համոզված լինեն, որ մարդը կարող է վերացնել խնդիրները, բարեկարգել մոլորակի բնապահպանական վիճակը։
Շատ կարևոր է նաև ընտանիքի դերը։ Ուսուցչի գործը դժվարանում է, երբ տանը երեխան տեսնում է մի բան, իսկ դպրոցում սովորեցնում են ուրիշ բան։ Այս դեպքում ուսուցիչը աշխատանք է տանում նաև ծնողի հետ։ Ընտանիքը հասարակության հիմքն է։ Առանց ընտանեկան ճիշտ դաստիարակության , միայն դպրոցում տարված աշխատանքը պակաս արդյունավետ կարող է լինել։ Այս առումով ևս <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան օգնում է , ձևավորելով անձի հասարակությանն ինտեգրելու ճանապարհին։ Երեխան ամեն օր ուղղակի, թե անուղղակի շփվում է շրջակա միջավայրի հետ, տեսնում է այնտեղ կատարվածը՝ թափված աղբ ամենուր, ծառահատումներ, օդի աղտոտում։ Ուստի ուսուցչի ճիշտ մեկնաբանումները , երեխաների քննարկումները, կատարած առաջարկները կբերեն ցանկալի արդյունքների։ Այսօր դասագրքերում զետեղված դասանյութերը հնարավորություն են տալիս ուսուցչի ստեղծագործական աշխատանքին։ Օրինակ՝ <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի 3-րդ դասարանի դասագրքում ուսուցանվող թեմաներից է Երկիր մոլորակն ու տիեզերքը։ ՏՀՏ-ի միջոցով երեխաները հստակ տեղեկություններ են ստանում , թե ինչպիսի՞ պտույտներ է կատարում մոլորակը, ի՞նչ դիրք է գրավում արեգակնային համակարգում, ինչպիսի՞ ջրային և ցամաքային տարածքներ կան և այսպես շարունակ։ Իսկ 4-րդ դասարանի դասագրքում ուսումնասիրվում է նաև հողի

օգտագործումն ու պահպանությունը, օգտակար հանածոները, զարմանահրաշ ջուրը, ինչպես նաև բնության երևույթներն ու պահպանությունը:

Դասաժամերին ՏՀՏ-ի կիրառման միջոցով երեխաները ճանապարհորդում են աշխարհով, համեմատում բնապահպանական խնդիրները, այդ խնդիրների լուծման ձևերը:Նրանք գիտակցում են, որ բնությունը իրենք և իրենց շրջապատող աշխարհն է: Եթե յուրաքանչյուր մարդ դա գիտակցի, շրջակա միջավայրի պահպանությունը կդառնա ավելի դյուրին: Երեխաների գիտակցությանը պետք է հասցնել, որ նրանք մաքուր պահեն շրջապատը, սովորեն ծառ տնկել, սիրեն թռչուններին ու կենդանիներին, հիանան բնության հրաշք գեղեցկությամբ: Այս գործում մեծ է նաև էքսկուրսիաների և արշավների դերը:Երեխաները ավելի են համախմբվում, մտերմանում, գիտակցում, որ բնությունը մեր բոլորի տունն է: Այցելությունները բնության թանգարաններ նպաստում են ավելի լավ ճանաչել հայրենի բուսական և կենդանական աշխարհը: Երեխաները տեսնում են այն, ինչ սովորում են դասագրքով:

Մեր երկրի ամենամեծ բնապահպանական խնդիրը աղբահանությունն է, ինչպես նաև հանքարդյունաբերությունը: Երեխան պետք է գիտակցի նաև, որ բնությունը աղտոտվում է տարբեր կողմերից՝ օդի աղտոտում (հրաբուխներ, գործարանների արտանետումներ), ջրի աղտոտում (քիմիական թափոններ, մարդկային գործոն) և այլն: Այս ամենը վատ ազդեցություն է ունենում նաև մարդու առողջության վրա: <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան ներառում է նաև մարդու մարմնի մասերի մասին տեղեկություններ: Դրա շնորհիվ երեխան ճանաչում է իր մարմինը, օրգան համակարգերը: Իսկ առողջության համար օգնության է գալիս բնությունը՝ սննդի տեսքով, բուժիչ ջրերի տեսքով և այլն: Այսինքն երեխան կրկին գիտակցում է , որ ինքը բնության մասնիկ է և կախված է բնությունից: Ուրեմն պետք է պահպանի այն, ընտրի առողջ ապրելակերպի կանոնները:

Բնապահպանական կրթության արտադասարանային ձևերը

Էկոլոգիական տոնը կրթության ձև է , որն իրենից ներկայացնում է միջոցառումների ամբողջություն, որոնք ուսուցանվում են որոշակի օրում:Օրինակ՝ <<Թռչնի օր>>, որը կարելի է անցկացնել գարնանը՝ թռչունների վերադարձի կապակցությամբ: Կարելի է նաև անցկացնել վիկտորինա՝ <<Ի՞նչ գիտես թռչունների մասին>> թեմայով, կամ կազմակերպել տեղեկատվության հավաքագրում <<Մեր մարզի թռչունները>> թեմայով և պատրաստել պատի թերթ: ՄԱԿ-ի որոշմամբ անցկացվում է <<Շրջակա միջավայրի պահպանության միջազգային օր>>, որը հունիսի 5-ին է:Այդ օրը կարելի է նշել ճամբարներում, բակերում:

Հայաստանում մեծ աշխատանք է ծավալվել բույսերի և կենդանիների <<Կարմիր գրքի>> ստեղծման ուղղությամբ, որոնք հրատարակվել են

1987-1988 թվականներից սկսած: Կարելի է կազմակերպել <<Կարմիր գրքի օր>>, որին նախապատրաստվելիս երեխաները, ուսուցչի օգնությամբ ,կծանոթանան անհետացող բույսերին, թռչուններին, կենդանիներին:

Բերքի տոն , կամ <<Ոսկի աշուն>>, որը գրեթե ամեն տարի անցկացվում է հոկտեմբերի վերջին: Այս տոնը շատ են սիրում երեխաները, որովհետև յուրաքանչյուրը ներկայացնում է իր այգու բերքը, հյուրասիրում են միմյանց: Միախառնվում է նաև ոսկեղօծ աշնան տրամադրությունը, անտառի գույները, և երեխաները ասմունքում են, երգում, պարում:

Էկոլոգիական խաղեր – Բնագիտական, էկոլոգիական կրթության մեջ լայն տարածում ունեն խաղային մեթոդները: Խաղերի ընթացքում ամբողջությամբ բացահայտվում են դպրոցականների ստեղծագործական ունակությունները: Կրտսեր դպրոցական տարիքում մեծ հետաքրքրություն է առաջացնում նյութի նկատմամբ, քանի որ խաղը ընթանում է կամավոր, կրում է համարձակության ոգի, որի շնորհիվ սովորողների մեծ քանակ, իր համար աննկատելի, ընդգրկվում է էկոլոգիական կրթության գործընթացի մեջ, ձեռք է բերում ինքնավստահություն, բարձրանում է ինքնագնահատականը: Օրինակներ.

Խաղ՝ <<Սննման շղթա>>:(Նկար-քարտերով, կամ բառերով)

Հող → Բույս → Մորեխ → Մուկ → Մ[illegible]ակեր կենդանի Արծիվ →

Սունկ → [illegible]նկակեր միջատ → [illegible]տ → [illegible] → [illegible]

Հող → Բույս → Կով → Մարդ



Նկար 1. Սնման շղթա

Խաղը բացատրվում է այսպես՝ եթե վնասակար նյութերը հողում շատ են, ապա բույսը առողջ չէ: Հիվանդ բույսերով սնվում են կովերը, որոնց կաթից և մսից օգտվում է մարդը: Եվ այսպես արդյունքում մարդու մոտ կարող է առաջանալ որևէ հիվանդություն:

Կարելի է կազմակերպել միջդասարանային մրցույթ: Օրինակ մասնակիցներն անցնում են կայարաններից կազմված երթուղով՝ <<Անտառ>>, <<Լիճ>>, <<Ճահիճ>>, <<Կենդանաբանական այգի>>, <<Դենդրոպարկ>>, <<Արգելոց>> և այլն: Յուրաքանչյուր կայարանում երեխաները կատարում են առաջադրանքներ, պատասխանում հարցերի և վաստակում միավորներ: Հաղթում է այն թիմը, որը շատ միավոր է վաստակել:

Եվ այսպես կարելի է կազմակերպել տարբեր խաղեր. <<Խնձորը մոլորակի մոդել>>, <<Մրցույթ- առկցիոն>>, <<Էկոլոգիական վիկտորինա>>, <<Բնական նյութերի շրջապտույտ>> և այլն: Այս խաղերը ավելի դյուրին ու մատչելի , ինչպես նաև հետաքրքիր են դարձնում <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսուցումը:Դասագրքում կան նաև հետաքրքրիր փորձեր , որոնք կատարելով, երեխաները մեծ հաճույք են ստանում և գիտելիքներով հարստանում ինքնուրույն:

Բնապահպանական կրթության արտադպրոցական ձևերը

Կրտսեր դպրոցական տարիքում արշավների և էքսկուրսիաների միջոցով ևս տարվում է էկոլոգիական կրթություն։ Խմբակային այցելությունները անտառ, ազգային պարկեր և այլն , մեծ բավականություն են պատճառում երեխաներին, ինչպես նաև հարստացնում են գիտելիքների պաշարը։

Հայտնի մանկավարժ- մեթոդիստ Կ.Պ.Յագոդինը ասել է. <<Բնապահպանական էքսկուրսիայի գլխավոր նպատակը կայանում է ոչ թե նրանում , որպեսզի սովորողին պարտադրեն հիշել տեսածը, անունները, այլ այն,որ սովորեցնեն որոնել, նկարագրել բույսի կամ կենդանու առանձնահատկությունները, որ տեսնեն բնության կյանքը, հասկանան նրա կարևորությունը>>։

Էքսկուրսիայի ընթացքում երեխաները սովորում են կողմնորոշվել տեղանքում, հետազոտել, առանձնացնել հակադրություններ։ Էքսկուրսիան թույլ է տալիս ամբողջությամբ բացահայտել բնության էսթետիկական, ճանաչողական պոտենցիալը, ձևավորել հատուկ վերաբերմունք բնության նկատմամբ, յուրացնել մի շարք բնապահպանական տեխնոլոգիաներ, ունենալ բնական միջավայրում անհատական վարքագիծ։

Էքսկուրսիան կարելի է սկսկսել բնական լանդշաֆտի նրա կարճ բնութագրումից, տվյալ սեզոնի առանձնահատկությունների որոշումից։ Կարելի է ուշադրություն դարձնել բնության գեղեցկության, ինքնատիպության վրա։ Կարող է օգտագործվել նաև գրողների ստեղծագործություններ, դիտել նկարիչների բնապատկերներ, կազմել հավաքածուներ տերևների, սերմերի։ Իսկ էքսկուրսիայից հետո երեխաները գրում են շարադրություններ, կամ նկարում են, ձևավորում են պատի թերթ։

Այսպիսի մի էքսկուրսիա է կազմակերպվել Ալավերդու Կ.Դոլինյանի անվան N 11 միջնակարգ դպրոցի 3-րդ դասարանցիների հետ։ Աշակերտները, դասվար Ս.Մուրադյանի հետ, այցելեցին Ստեփանավանի դենդրոպարկ։ Այնտեղի բուսական աշխարհը, ծառատեսակները շատ էին տարբերվում Ակների ծառատեսակներից։ Երեխաները սեփական աչքերով տեսան փշատերև ծառերի կոները, նրանց սերմերը, սովորեցին, թե ինչպես են բազմանում, և ինչու՞ փշատերև ծառերը մեծ նշանակություն ունեն։

Այսպիսով էքսկուրսիաները նպաստում են երեխաների գիտելիքների հարստացմանը, բնապահպանական խնդիրների լուծումներ գտնելուն, ինչպես նաև գեղագիտական դաստիարակություն են տալիս։

Նկար 2. Բնապահպանական էքսկուրսիա Ստեփանավանի դենդրոպարկ

Նկար 3. Աշակերտները դենդրոպարկում

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ

Հունվարի 11- Արգելանոցների օր
Փետրվարի 2- Ջրաճահճային տարածքների համաշխարհային օր
Փետրվարի 5- Մ.Ի.Պրիշվինի ծննդյան օր
Փետրվարի 11-Վ.Վ.Բիանկի ծննդյան օր
Մարտի 15- Սպառողների համաշխարհային օր
Մարտի 22- Ջրի համաշխարհային օր
Մարտի 23- Համաշխարհային մետերոլոգիական օր
Ապրիլի 1- Թռչունների միջազգային օր
Ապրիլի 18-22-<<Այգիների արշավավ>> միջազգային ակցիա
Ապրիլի 22- Երկրի օր
Ապրիլի 26- Ռադիացիոն վթարների և աղետների ժամանակ զոհվածների հիշատակի օր
Մայիսի 12- Էկոլոգիական կրթության օր
Հունիսի 5- Շրջակա միջավայրի պահպանության միջազգային օր
Օգոստոսի 6- Հերոսիմայի օր
Օգոստոսի 27 - Բայկալի օր
Սեպտեմբերի 15- Խաղաղության միջազգային օր
Սեպտեմբերի 16-Օզոնային շերտի պահպանության միջազգային օր
Սեպտեմբերի 26-Անտառի աշխատողների օր
Սեպտեմբերի 27-Տուրիզմի օր
Սեպտեմբերի 29-Ծովի համաշխարհային օր
Հոկտեմբերի 4- Կենդանիների պաշտպանության համաշխարհային օր
Հոկտեմբերի 6- Ապրելավայրի պահպանության օր
Հոկտեմբերի 14-Բնական աղետների վտանգավորության նվազեցման համաշխարհային օր
Դեկտեմբերի 29-Կենսաբազմաձևության համահային օր

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքը կատարելու ընթացքում եկանք այն եզրահանգման,որ <<Ես և շրջակա աշխարհը>>առարկայի ուսուցումը տարրական դասարաններում մեծ նշանակություն ունի աշակերտների մոտ դեռևս մանկուց ձևավորել բնապահպանական կրթություն,դաստիարակություն,վերաբերմունք։ Առարկայի ուսուցումը նպաստում է աշխարհաճանաչողական կրթությանը։ Ձևավորում է գիտակցություն այն մասին,որ բնության դերը շատ մեծ է մեր կյանքում,մենք օգտվում,սնվում,շնչում ենք բնության հաշվին։Այդ իսկ պատճառով պետք է սիրել,հոգատար վերաբերմունք դրսևորել,պահպանել բնությունը իր ամբողջականությամբ։Չի կարելի աղտոտել միջավայրը՝աղբի,թափոնների, արտանետվող գազերի միջոցով,կատարել ծառահատումներ,վնասել բնական արեալը։Աշակերտների մոտ բնության նկատմամբ սեր,հոգատարություն սերմանելու գործում կարելի է կազմակերպել բաց-դասեր, ինչպես տվյալ առարկայից ,այնպես էլ դասավանդվող այլ առարկաներից՝ միջառարկայական կապեր ստեղծելով։Կարելի է հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ բնության գիրկ,պուրակներ,արգելոցներ։ Այս ամենի ընթացքում կներկայացվեն բնապահպանական խնդիրների պատճառահետևանքային կապերը,կձևավորվի խնամքով վերաբերմունք բնության նկատմամբ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆՑԱՆԿ

1. ԵղոյանԱ. <<ՄխիթարՍեբաստացիկրթահամալիր>>։
2. ԽառատյանՎ. <<Դպիր>>էլեկտրոնայինամսագիր։
3. ՋուհարյանՕ.,ԵղոյանՌ.,ՎարդանյանԶ.,ՍաղաթելյանԱ. <<Էկոլոգիականկրթությանմանկավարժականհիմունքները,ՀՀԳԱԳէկոլոգանոոսֆերայինհետազոտությունների կենտրոնիհրատ. Երևան 2005,էջ131։